«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	№ 3 Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը
ԱՌԱՐԿԱ	ֆիզկուլտուրա
ՀԵՂԻՆԱԿ	Տոնոյան Գարիկ
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Ֆոտոն» վարժարան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն 3

Մաս՝ 1. Կրթական կարիքների բացահայտման եվ գնահատման գործընթացը երեխաների ուսումնառության ընթացքում 6

Մաս՝ 2. Կրթական կարիքի գնահատում 8

2.1. Հիմնական հասկացություններ 9

2.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը 10

Մաս՝ 3. Սովորողի գործունեության գնահատման գործիք (նկարագրություն եւ կիրառման կարգ) 12

Մաս՝ 4. Ուսուցման կազմակերպումը, մեթոդներն ու միջոցները..... 14

Եզրակացություն եւ առաջարկություններ 16

Օգտագործված գրականության ցանկ 17

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հետազոտության կարեւորությունը.

Դպրոցում բոլոր երեխաների մասնակցությունը խթանող տարբեր (այդ թվում՝ անհատական) մոտեցումներ ու հնարներ օգտագործելու համար նախ պետք է կարողանալ բացահայտել յուրաքանչյուր սովորողի հատուկ կրթական կարիքներն ու որոշել դրանց բավարարման ուղիները՝ ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ գերունակությամբ, գերակտիվությամբ (հիպերակտիվ) օժտված երեխաների բոլոր կատեգորիաների եւ խմբերի հետ կապված՝ հաշվի առնելով նրանց զարգացման տարբերակների շրջանակը: Կարեւոր անհրաժեշտություն է,

- ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրային հարմարեցումների եւ անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք ունեցող երեխաներին, հնարավորինս շուտ բացահայտելն ու աջակցելը:
- դպրոցի մանկավարժական կոլեկտիվի եւ ծնողների, սովորողներին աջակցելու, վերաբերմունքի կազմակերպման հիմնական ուղղությունների, համագործակցության շրջանակի որոշելն ու արդյունավետության մեթոդաբանության սահմանելը:

Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին ու կարիքներին համապատասխան որակյալ կրթություն, որի ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտել եւ գնահատել, որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով եւ դժվարություններով:

Հետազոտության նպատակը.

Ուսուցչի կողմից, երեխաների ուսումնառության ընթացքում կրթական կարիքների բացահայտման ուղիների ու մեթոդների արժեւորումը:

Հետազոտության խնդիրները

1. Դիտարկել, ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրային հարմարեցումների եւ անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք ունեցող երեխաների արագ բացահայտման ու աջակցության ուղիներն ու մեթոդները:
2. Դիտարկել դպրոցի, մանկավարժական կոլեկտիվի եւ ծնողների, սովորողներին աջակցման եւ ուղեկցման հնարավորություններն ու կիրառականությունը:
3. Դիտարկել դպրոցի մանկավարժական եւ սպասարկող անձնակազմի, սովորողների ու նրանց ծնողների հետ համագործակցության շրջանակը, արդյունավետության մեթոդաբանությունը:

Հետազոտության մեթոդները

- Սոցիոլոգիական, հոգեբանական ու մանկավարժական գրականության տեսական վերլուծություն, փաստաթղթերի ուսումնասիրություն.
- Տեսականի ու գործնականի համադրական վերլուծության եւ ընդհանրացման մեթոդ.
- Դիտարկման, զրույց-հարցազրույցի մեթոդ.
- Փորձաքննական գնահատում.

Հետազոտության շրջանակը.

Ներառել եմ ոչ միայն «Հատուկ կրթական կարիքներով երեխա» բնութագրվող զարգացման խանգարումներ ունեցող, այլև գերակտիվ, գերունակ երեխաների դժվարությունները կրթության մեջ, մասնավորապես՝ ֆիզկուլտուրայի դասերին, կարող են շատ տարբեր լինել՝ արտահայտված, կարողությունների դրսեւորման, հատկապես, ֆիզիկական հնարավորություններով:

Հետազոտությունն իրականացվել է Գյումրու «Ֆոտոն վարժարանի» կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում՝ V եւ X դասարանների սովորողների, նրանց ծնողների, դպրոցի մանկավարժական, վարչական եւ սպասարկող անձնակազմի աշխատակիցների շրջանում: Հետազոտության մեջ ներգրավվել է 30 ուսուցիչ, վարչական անձնակազմի 5 եւ սպասարկող 5 աշխատակիցների, 100 սովորողի, 100 ծնողի շրջանում:

Հետազոտության փուլերը.

Հետազոտությունն անցկացվել է 3 փուլով:

I-փուլում կատարվել է հետազոտության առարկան ներկայացնող գրականության, հրապարակումների ուսումնասիրություն, որոշակիացվել են մոտեցումները հետազոտության ընդգրկման շրջանակների, մեթոդների եւ արդյունավետության ապահովման վերաբերյալ,

II-փուլում սահմանվել են հետազոտության բովանդակությունը՝ հարցերի շրջանակը, եւ ուղղությունները, իրականացվել է հանդիպումների ու դիտարկումների ձեւերի ու միջոցների փորձարարական ստուգում:

III-փուլում, ամփոփվել են ուսումնասիրության արդյունքները, հետազոտությամբ ստացված արդյունքները, ձեւակերպվել են եզրակացությունն ու առաջարկությունները, կատարվել է աշխատանքի ներկայացման ձեւավորումը:

<u>Հետազոտության արդյունավետությունը</u>.

Հիմնավորվել է ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորման, միջավայրային հարմարեցումների եւ անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների տրամադրման կարիք ունեցող երեխաներին հնարավորինս շուտ բացահայտելու եւ աջակցելու առաջնահերթությունը:

Որոշվել է դպրոցի, մանկավարժական կոլեկտիվի եւ ծնողների, սովորողներին աջակցման եւ ուղեկցման կազմակերպման հիմնական ուղղությունները:

Սահմանվել եւ բնութագրվել է, դպրոցի մանկավարժական եւ սպասարկող անձնակազմի, սովորողների ու նրանց ծնողների հետ համագործակցության շրջանակը, արդյունավետության մեթոդաբանությունը:

Մաս՝ 1.

ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Հատուկ կրթական կարիքներով երեխա», համեմատաբար նոր, բայց արդեն բավականին կայացած տերմին է, որը լեզվամտածողության մեջ գիտակցվում է որպես զարգացման խանգարումներ ունեցող երեխաների նկատմամբ փոփոխվող վերաբերմունքն արտացոլելու անհրաժեշտություն, նրանց իրավունքների նոր ըմբռնում:

Ժամանակակից իմաստով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան այն երեխա է, ով կարիք ունի կրթության և դաստիարակության հատուկ պայմանների՝ իր հնարավոր առավելագույն զարգացման, կրթության, համայնքի եւ ընտանիքի մշակույթին ծանոթանալու համար:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման ու տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ ապահովելու երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների եւ միջավայրային հարմարեցումների տրամադրումը[5]:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոց, ամրագրվել են դեռեւս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների կոնվենցիան» (1989, ՄԱԿ) եւ «Կրթությունը բոլորի համար» համաշխարհային հռչակագիրը» (Դակար, 2000): 1994 թվականին աշխարհի 92 երկրների կառավարությունների ու 15 միջազգային կազմակերպությունների կողմից ստորագրված «Սալամանկայի հռչակագիրը» սահմանեց, որ յուրաքանչյուր երեխա ունի կրթական առանձնահատկություններ եւ կրթության հիմնարար իրավունք:

Գիտական համատեքստում «Հատուկ կրթական կարիքներով երեխա» տերմինը կարեւոր է, քանի որ այն ցույց է տալիս նորմատիվ եւ շեղված զարգացում ունեցող երեխաների գիտությունների սահմանների «թափանցելիությունը», քանի որ հատուկ կրթական կարիքները կարող են առաջանալ ոչ միայն առողջական սահմանափակումներով, այլեւ սոցիալ-մշակութային գործոններով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները կարող են դժվարություններ ունենալ խաղալիս, կենսագործունեության եւ համակեցության գործառույթներում, որի համար նրանց պետք է օգնել՝ լրացուցիչ աջակցելով դպրոցում եւ համագործակցաբար աշխատելով ծնողների հետ:

Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր (այդ թվում՝ անհատական) մոտեցումներ ու հնարներ:

Երեխաների մի խմբի համար դժվարությունները կարող են պայմանավորված լինել հաշմանդամությամբ, որը հանրակրթական ծրագրի յուրացումը դարձնում է ավելի բարդ: Որոշ երեխաների համար այդ խնդիրները ժամանակավոր դժվարություններ են հանդիսանում, մինչդեռ մյուսների համար դրանք կարող են լինել երկարատեւ եւ մշտական մասնագիտական աջակցություն պահանջող խնդիրներ:

Մաս՝ 2.

ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Եթե կրթության ցանկացած փուլում երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են երեխային՝ իր կարողությունների չափով մասնակցություն ունենալ ուսումնառության գործընթացում, ապա ուսուցիչը, երեխայի ծնողի համաձայնությամբ, երեխայի դպրոցական մակարդակի գնահատում իրականացնելու դիմում է ներկայացվում տնօրենին: Գնահատումը սկսելուց, առնվազն, մեկ շաբաթ առաջ դպրոցի տնօրինությունը երեխայի ծնողին գրավոր տեղեկացնում է՝ դպրոցական մակարդակի գնահատման նպատակների մասին: Ծնողի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում, տնօրենի հրամանով հանձնարարվում է դպրոցի ուսուցիչներին եւ մանկավարժահոգեբանական աջակցության խմբին* իրականացնել երեխայի դպրոցական մակարդակի գնահատում**:

Ուսուցչի դիտարկումը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ՝ համագործակցելով դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի, դասավանդող այլ ուսուցիչների եւ աշակերտի ծնողների հետ, ուսուցիչը որոշակի ժամանակահատվածում, դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկություն՝ երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ուդժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների եւ այլի մասին: Երեխայի հնարավորությունների, կարիքների եւ զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարեւոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու եւ կազմակերպելու համար:

Գնահատման այս փուլը, որը ներառում է երեխայի ուսուցիչների եւ այլ մանկավարժահոգեբանական աշխատողների կողմից դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, տեւում է 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված: Դիտարկման արդյունքների վերլուծության համար կիրառվում է «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը, իսկ արյունքները արձանագրվում են «Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման

** Դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներ կարող են լինել երեխայի հետ աշխատող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մասնագետները (հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ եւ այլն) եւ երեխայի ծնողը: Դպրոցական մակարդակի գնահատում իրականացնող խմբի անդամների թիվը կախված է նրանից, թե որ ոլորտներում երեխան ունի դժվարություններ եւ ինչ մասնագետներ են անհրաժեշտ:*

*** «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ» ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 13.04.2017թ. № 370-Ա/2 հրամանի հավելված, 34-36-րդ կետեր:*

թերթիկ» ձեւաթղթում: Եթե երեխայի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի հանգում երեխայի մոտ որեւէ ֆունկցիայի խանգարման, բայց երեխան մեկ կամ մի քանի ոլորտներում ունի թեթեւ դժվարություններ, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է «Կանխարգելիչ միջոցառումների պլան»՝ կիսամյակային կտրվածքով ծառայությունների տրամադրման եւ միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (նպատակներ եւ դեպի այդ նը-պատակները տանող քայլեր, դասավանդման մեթոդներ, տեղի եւ դասասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում եւ այլն):

2.1. Հիմնական հասկացություններ

Կրթության առանձնահատուկ պայմաններ – երեխայի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի եւ ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաեւ մանկավարժական, սոցիալական եւ այլ ծառայությունների ամբողջություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա – ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող երեխա, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ **–** ուսումնամեթոդական, հոգեբանական եւ մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին եւ մանկավարժական աշխատողին:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում – երեխայի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկման, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտման եւ կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանման գործընթացների անհրաժեշտությունը:

Անհատական ուսուցման պլան – հանրակրթության պետական եւ առարկայական չափորոշիչների, ծրագրերի եւ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է երեխայի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները եւ դրանց հասնելու գործողությունները (ներառյալ աջակցող ծառայությունները):

2.2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը, որն իրականացվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու* համար:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան եւ նպատակ ունի սահմանելու.

1. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական եւ այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ.

2. ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ դեպքերում ֆինանսավորման բարձ-րացված չափաքանակ տրամադրելու հիմքերը[7].

3. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները եւ տեւողությունը: Երեխայի գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում (առաջին, հինգերորդ եւ տասներորդ դասարաններում), ինչպես նաեւ՝ երբ երեխայի մոտ ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներով պայմանավորված, նկատվում են կայուն դժվարություններ[8]:

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1. դպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է հաստատության ուսուցիչների եւ մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող եւ դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:

2. Տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը, եւ դրանով (կամ դրանցով) պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը: Վկայագրված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է վերագնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ համատեղ:

**«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, մաս՝ 1, 10.1 կետ:*

Մաս՝ 3.

ՍՈՎՈՐՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ

(նկարագրություն եւ կիրառման կարգ)

Կարեւոր է, որ ուսուցիչը կամ մանկավարժահոգեբանական աջակցության խումբը դիտարկման արդյունքում կարողանա պարզել, թե երեխան «Երեխայի գործունեության գնահատման գործիքի» որ ոլորտում կամ ոլորտներում ունի դժվարություն, եւ բացահայտել աջակցության չափը:

Գնահատումը դիտարկման միջոցով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքման, համակարգման եւ եզրահանգումներ կատարելու մի գործընթաց է, որի արդյունքում սահմանվում է, թե ինչ է անհրաժեշտ երեխային դպրոցում, դասարանում, տանը, համայնքում՝ հետագա զարգացման եւ անկախ լինելու համար: Դպրոցական մակարդակի գնահատում իրականացնելու համար հանրապետական անկավարժահոգեբանական կենտրոնի կողմից մշակվել եւ ուսումնական հաստատություններին է տրամադրվել «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը, որը թույլ է տալիս սահմանել այն ոլորտները, որտեղ երեխան ունի լրացուցիչ աջակցության կարիք, ինչպես նաեւ որոշել երեխայի ինքնուրույնության մակարդակը կամ պահանջվող աջակցության չափը:

Դպրոցների համար նախատեսված, 20 բաժիններից* բաղկացած «Երեխայի գործունեության գնահատման գործիք»-ը **կիրառող մասնագետները պետք է կատարեն օբյեկտիվ գնահատում՝ բացառելով դրական կամ բացասական վերաբերմունքը երեխայի նկատմամբ:**

Հարկ է նաեւ նկատի ունենալ, որ հատուկ կարիքներով սովորողները ունենում են ընդհանուր բնորոշ թերություններ, որոնք ներառում են 1) նեղ աշխարհայացք, որ է չիմացություն՝ շրջակա միջավայրի մասին, 2) համախառն ու նուրբ շարժողունակության հմտությունների խնդիրներ, 3) խոսքի զարգացման հետամնացություն, 4) ինքնամփոփվածություն, 5) կամայականությունների կանոնավորման դժվարություններ, 6) ճանաչողական ործունեության խնդիրներ, 7) հոռետեսություն, 8) հասարակության մեջ դրսեւորման եւ իրենց սեփական վարքագծի վերահսկման անկարողություններ, 9) ցածր կամ շատ բարձր ինքնագնահատական, 10) ուրիշներից ամբողջական կամ մասնակի կախվածություն:

** Դպրոցների համար նախատեսված, «Երեխայի գործունեության գնահատման գործիքի» բաղկացուցիչ 20 բաժինները. 1) Ըմբռնել հրահանգները եւ հետեւել դրանց, 2) Հարմարեցման կարողություն, 3) Մասնակցելու եւ ակտիվ լինելու շահագրգռվածություն, 4) Փոխհարաբերությունները հասակակիցների հետ, 5) Ինքնասպասարկում, 6) Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում, 7) Մանր մոտորիկա՝ դաստակի եւ ձեռքերի գործածում, 8) Ուշադրություն, 9) Հիշողություն, 10) Հաղորդակցում, 11) Ընտրություն կատարելու կարողություն, 12) Կուլ տալու, 13) Կարդալու, 14) Գրելու, 15) Խոսելու կարողություն, 16) Մեքենայով փոխադրվել, 17) Համայնքի մատչելիություն, 18) Վարքի կառավարում, 19) Կողմնորոշում, 20) Ապահովության դատողություն:*

Մաս՝ 4.

Ուսուցման կազմակերպում. մեթոդներ ու միջոցներ

Ուսուցման մեթոդներ ու միջոցներ, այսինքն՝ «Շրջանցումներ» կառուցելու անհրաժեշտություն, ուսուցման հատուկ մեթոդների եւ միջոցների կիրառում, ավելի տարբերակված, «քայլ առ քայլ» ուսուցման մեջ, քան սովորաբար պահանջվում է նորմատիվ զարգացում ունեցող երեխաների համար: Օրինակ՝ խուլերի ուսուցման ժամանակ դակտիլոլոգիայի եւ ժեստերի լեզվի օգտագործումը, կույրերին սովորեցնելիս դաջված Բրայլի կիրառումը, սովորականից շատ ավելի վաղ, խուլ երեխաներին կարդալ եւ գրել սովորեցնելը, աուտիզմով երեխաներին գրագիտության ուսուցման հատուկ մեթոդներ եւ այլն:

Ուսուցման կազմակերպումը

Ուսուցման կազմակերպում նշանակում է կրթական միջավայրի հատուկ տարածական, ժամանակային եւ իմաստային կազմակերպման մեջ կրթության կազմակերպման ձեւերի եւ դրա որակական անհատականացման ավելի մեծ փոփոխականության անհրաժեշտություն: Այսպես, օրինակ, աուտիզմով երեխաներին անհրաժեշտ է կրթական տարածքի հատուկ կառուցվածք, որն ավելի հեշտ է դարձնում նրանց հասկանալ տեղի ունեցողի իմաստը՝ հնարավորություն տալով կանխատեսել իրադարձությունների ընթացքը եւ պլանավորել իրենց վարքը:

Կրթական տարածքի սահմանները

Կրթական տարածքի սահմաններ՝ նշանակում է կրթական տարածքի առավելագույն ընդլայնման, ուսումնական հաստատության սահմաններից դուրս գալու անհրաժեշտություն՝ կյանքի ձեռնահասության՝ կոմպետենտության ձեւավորման եւ ձեռք բերված գիտելիքները առօրյա կյանքում կիրառելու կարողության զարգացման համար:

Կրթության տեւականությունը

Կրթության տեւականություն նշանակում է շարունակական եւ հատուկ կարիքներով կրթության անհրաժեշտություն. ողջ կյանքի ընթացքում՝ հաշվի առնելով փոփոխվող եւ ավելի բարդ սոցիալական եւ կրթական մարտահրավերները:

Կրթությանը մասնակից եւ փոխգործակցող անձանց շրջանակը

Կրթության մեջ ներգրավված անձանց շրջանակը եւ նրանց փոխգործակցությունը ընտանիքը երեխայի վերականգնման գործընթացում ընդգրկելու անհրաժեշտությունն է՝ կրթության եւ մասնագետների կողմից նրա հատուկ վերապատրաստման միջոցով. տարբեր պրոֆիլների որակավորված մասնագետների համակարգված

մասնակցության անհրաժեշտությունը (հատուկ հոգեբաններ և ուսուցիչներ, սոցիալական աշխատողներ, տարբեր մասնագիտությունների բժիշկներ, նյարդա- եւ հոգեֆիզիոլոգներ եւ այլն):

Առողջական սահմանափակ հնարավորություններով բոլոր երեխաների համար ընդհանուր շարքում առանձնանում են կրթական առանձնահատուկ կարիքներ, որոնք հատուկ են երեխաների յուրաքանչյուր կատեգորիային, նանց տարիքային յուրաքանչյուր փուլին, յուրաքանչյուր կատեգորիայի մեջ դիտարկվող հոգեբանական զարգացման տարբերակներին, ինչպես նաեւ անհատական կարիքներին, որոնք որոշվում են երեխայի կյանքի եզակի պատմությամբ, դաստիարակությամբ եւ կրթությամբ:

«Հատուկ կրթության կարիք ունեցող երեխա» հասկացությունը հետագա զարգացման կարիք ունի:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների սոցիալական եւ հոգեբանական ներառումը մեծ պատասխանատվություն է ուսուցիչ-ների եւ կրթական մյուս անձնակազմի համար:

Երբեմն ներառական կրթության այս կողմը անուշադրության է մատնվում և ամբողջ ուշադրությունը հատկացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսումնական ներառմանը: Այնուամենայնիվ, հետա-զոտության արդյունքներից երևում է, որ ներառական կրթության այս կողմը նույնքան կարեւոր է աշակերտների կրթական վերջնարդյունքների բարելավման համար: Հետե-վաբար, ուսուցիչներն ու հատուկ մանկավարժները, դպրոցի հոգեբանները, սոցիալա-կան աշխատողները եւ դպրոցի այլ աշխատակիցները պետք է ունենան կարողութ-յուններ՝ ապահովելու ներառական կրթության սոցիալհոգեբանական կողմը:

Անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորել եւ տարբերակել հաշմանդամություն ունեցող երեխաների յուրաքանչյուր կատեգորիայի հատուկ կրթական կարիքների, զարգացման յուրաքանչյուր տարիքային փուլի եւ կրթության մակարդակի նկարա-գրությունը, սահմանումն ու իմաստավորումը:

Պետք է, նույնիսկ պահանջվում է՝ հաշմանդամություն ունեցող երեխաների յուրաքանչյուր կատեգորիայի հատուկ կրթական կարիքների նույնքան ճշգրիտ, ման-րամասն, գիտականորեն հիմնավորված սահմանում՝ կապված յուրաքանչյուր տա րիքի, զարգացման տարբերակի եւ կրթության փուլի հետ:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Գիտականորեն հիմնավորել եւ տարբերակել հաշմանդամություն ունեցող երեխաների յուրաքանչյուր կատեգորիայի հատուկ կրթական կարիքների, զարգաց-ման յուրաքանչյուր տարիքային փուլի եւ կրթության մակարդակի նկարագրությունը, սահմանումն ու իմաստավորումը:
2. Ճշգրիտ ու մանրամասն սահմանել եւ գիտականորեն հիմնավորել հաշման-դամություն ունեցող երեխաների յուրաքանչյուր կատեգորիայի հատուկ կրթական կարիքները՝ կապված յուրաքանչյուր տարիքի, զարգացման տարբերակի եւ կրթու-թյան փուլի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Երեխաների իրավունքների կոնվենցիան» (1989, ՄԱԿ) http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf

2. «Կրթության մասին» ՀՀ 1999թ. ապրիլի 14-ի թիվ ՀՕ-297 օրենքը. https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299

3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908

4. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում» մեթոդական ուղեցույց. https://www.unicef.org/armenia/media/3411/file/%D4%BF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%AF%20%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%AF%D5%A1%D6%80%D5%AB%D6%84%D5%AB%20%D5%A3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4.pdf

5. «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ», ՀՀ ԿԳՆ 13.04.2017թ. № 370-Ա/2 հրամանի հավելված, 32-րդ, 34-36-րդ կետեր: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113152

6. Дети с особыми образовательными потребностями в системе понятий культурно-исторической психологии **https://alldef.ru/ru/articles/almanah-39/children-with-special-educational-needs-in-the-system-of-concepts-of-cultural-historical-psychology**

7. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ (հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2014թ-ի ապրիլի 13-ի N370-Ն հրամանով): https://www.mskh.am/sites/default/files/user/5/files/370-2017.pdf

8. ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ,Հանրակրթության մասինե ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասինե ՀՀ օրենք (ՀՕ-200-Ն) http://edu.am/index.php/am/about/view/107

9. Ներառական կրթություն. ուսումնամեթոդական ուղեցույց. Ձեռնարկ. Եր., «Հույսի կամուրջ» ՀԿ, 2015.-200 էջ: